բաց են անում այս գիրքը, ապահովելով նրա գոյութիւնը իրանց նուիրաբերած կայքերի եկամուտներով: Հայ եկեղեցու Հայ գրին, Հայ տպագրութեանը և հայ դպրոցին մաղթում ենք յարատեւութիւն և անընդհատ առաջդիմութիւն:

Թող օրհնուի նրանց յիշատակը, որոնք այն տառապեալ ազգի ձեռքը գիրք տուին, գիր սովորեցրին և նրա համար դպրոցներ բացին:

Պետ. Մոճոռեան

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ

Կիրակի 13-ն, հոկտեմբերի. առաւօտեան 9—11 ժամին Յաջորդարանում ընդունելութիւն հայազգի և օտարազգի շնորհաւորողների, որոնց կ'առաջարկուի թէյ:

10—11 ժամին զինուորական երաժշտախումբը կ'բերէ քաղաքի ամբողջ աշակերտութիւնը սբ. Աստուածածին ա. եկեղեցին`:

11 ժամին նոյն տեղը կ'հաւաքուին համքարներն իրենց դրօշներով:

Եկեղեցում կ'մատուցուի պատարագ ապա կարճ քարոզ օրուայ մեծ նշանակութեան մասին.

11½ ժամին հանդիսաւոր թափորը կ'դիմէ սբ. Փրկիչ եկեղեցու արեւմտեան դուռը, ուր զինուորական երաժշտախումբը կ'նուագէ ժողովրդական հիմն, ապա կ'կատարուի բացօթեայ Հայրապետական մաղթանք. կ'երգուի «Տէր կեցո Դու զՀայս»:

12½ ժամին երթը կ'շարունակուի դէպի Ժողովրդական Տուն, ուր կ'լինի գրական-երաժշտական ցերեկոյթ ժողովրդի համար:

Երեկոյեան 4 ժամից սկսած Յաջորդարանի և սբ. Աստուածածին եկեղեցու շուրջը ժողովրդական զբօսանք. զինուորական երաժշտախումբ, աշուղական նուագ և խմբական երգեցողութիւն:

◆ Համազգային յոբելեանների առթիւ քաղաքագլուխը քաղաքային ինքնավարութեան անունից ուղարկել է Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետեւեալ հեռագիրը.

Էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հայ տառերի 1500 ամեակի և հայ տպագրութեան այսօրուայ մեծ յոբելեանին որդիական պարտք եմ համարում Ալէքսանդրապօլի հասարակութեան և իմ կողմից սրտի ցընծութեամբ շնորհաւորել Ձեր Վեհափառութեան. թող Ամենակարողն Աստուած տայ Ձեզ Սրբազնասուրբ Հայրապետ, ուժ և կարողութիւն, անդրդուելի պահելու մեր սուրբ եկեղեցին, որի հովանաւորութեան տակ ծաղկել են և առաջադիմում ենմեր գրականութիւնն և դպրոցական հաստատութիւնները, շնորհիւ մեր մեծ հայրերի` Սահակի և Մեսրոպի.

Քաղաքագլուխ Կամսարական

◆ Այսօր երեկոյեան 8 ժ. ժողովրդական տանը հանդիսաւոր յոբելենական ներկայացում կ'լինի. կ'խաղան «Սամուէլ» պատմական դրամա 3 գործ.

Ներկայացումից յետոյ կենդանի պատկերներ.—ա. «Սբ. Մեսրոպ` հայ տառերն ստեղծագործելիս». բ. «Վարդաշապատի ազգային ժողովը» և գ. «Թարգմանիչները».

◆ Տեղիս Արղութեան դպրոցի կողմից Համազգային մեծ յոբելեանին մասնակցելու համար ուղեւորուեցին Էջմիածին հոգաբարձութեան անդամ Յակոբ Էյրհամճեան և դպրոցի տեսուչ Ա. Տէր-Պօղոսեան, իսկ տեղիս Մէշչանների կողմից Կարապետ Իսահակեանց:

◆ Երէկ, Համազգային մեծ յոբելեանի առթիւ տեղիս հայկական և պետական բոլոր դպրոցների սաները ազատ էին պարապմունքից:

◆ Ամսիս 16-ին Հայոց դրամատիկական խումբը տալու է յոբելենական մի ներկայացում, առաջին անգամ, յատուկ տօնի առթիւ գրուած «Սահակ Մեսրոպ» 2 արարուածով պիէսը, հեղինակութիւն Արմենեանի: Լինելու է համառօտ դասախօսութիւն և կենդանի պատկերներ, երգիչների խումբ, երաժշտութիւն և հեթանոսական պարեր:

◆ Գրերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանների առիթով Ալէքսանդրապօլի աշխատաւոր-արհեստաւորներին ձրի բաժանում է մի հարիւր օրինակ Դր. Տէր-Պօղոսեանի «Հավոցի Եզօ» պատկերից դիմել «Շիրակ» և Մալխասեանի տպարանները և «Արագած» գրավաճառանոցը:

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

Նիստը բացւեց նախագահութեամբ քաղաքագլխի, որի առաջարկով դուման յոտնկայս յարգեց նորերս վախճանուած իրաւասու Վ. Մանուկեանի յիշատակը:

Քաղաքագլուխը զեկուցեց, որ տե-